եւրոպացի եւ ճանապարհորդ: Այդպէս էլ նա ընդունեց ինձ: Նա գիտէր, թէ ի՞նչ կարծիք, ի՞նչ նախապաշարմունքներ կարող է ունենալ մի եւրոպացի նրա մասին. նա գիտէր, թէ ի՞նչ է պահանջում նրանից, որպէս մի երկրի գլխաւոր կառավարչից, այժմեան քաղաքակրթութիւնը. նա գիտէր եւ իր երկրի անկարգութիւնները, այդ բոլորը շատ լաւ գիտէր նա, եւ այդ նկատումներով, իր բոլոր խօսակցութիւնը ճարտարութեամբ այնպէս էր դարձնում, որ ինքը եւ իր կառավարութիւնը ընդհանուր ցեխի մրջից մաքուր դուրս գան: Եթէ այդ բոլորը ինձ յայտնի չլինէր, եթէ ես մի միամիտ եւրոպացի ճանապարհորդ լինէի, անտարակոյս, շատ լաւ գաղափար կը կազմէի այդ մարդու եւ նրա կառավարութեան մասին:

— Այդ մարդիկը, — առաջ տարաւ նա, — գրաւելու եւ իրանց լաւ ցոյց տալու զարմանալի շնորհք ունեն: Մինչեւ անգամ բարբարոս քուրդ ցեղապետը շնորհք ունի հիացնելու միամիտ եւրոպացուն, երբ պատահում է նրան հիւրասիրոել այդ աւազակի վրանում: Բայց ի՞նչ բարոյական նշանակութիւն ունի մի ասիական բռնապետի հիւրասիրութիւնը, երբ նրա հացը իր զոհերի արիւնովն է շաղախուած, երբ կերակրում է նա իր հիւրին այն կողոպուտներով, որ յափշտակել էր հարիւրաւոր թշոառներից: Մեր դժբախտութիւնը նրանումն է, որ այդ բոլորը այդպէս լինելուց յետոյ իսկութիւնը, բուն իրողութիւնը՝ մեր վիճակի դառն ճշմարտութիւնները դառնում են տարակուսական, եւ եւրոպացիք դժոարանում են մեզ հաւատալ, երբ մեր բողոքն ու դժգոհութիւնները ներկայացնում ենք նրանց: Բայց մեզ համար մեծ նշանակութիւն ունի Եւրոպայի հասարակական կարծիքը: Ի հարկէ, մենք չէինք ցանկանայ մահմեդականների նման խաբել նրանց, բայց կը ցանկանայինք, որ նրանք լաւ հասկանային մեր դրութիւնը...

Ասլանը բնաւորութեամբ լռութիւն սիրող էր, բայց երբ տաքանում էր, երբ սկսում էր խօսել, խօսում էր շատ երկար: Այդ միջոցին անկարելի էր ընդմիջել նրան, պէտք էր թոյլ տալ, որ նա իր ասելիքը վերջացնէ: Այնօրոայ այցելութիւնը նրա վրայ խիստ անախորժ տպաւորութիւն էր թողել: Չնայելով, որ արդէն ճաշի ժամանակ էր, վարպետ Փանոսն անգամ մի առանձին հետաքրքրութեամբ լսում էր նրան եւ չէր կամենում խանգարել նրա խօսակցութիւնը, պատոիրելով, որ ճաշի սեղանը պատրաստեն: Նա շարունակեց.

— Որքան մահմեդական ժողովրդի ներկայացուցիչները շնորհալի են օտարներին գրաւելու մէջ, այնքան մերոնք կոպիտ եւ անշնորհք են: Երբ որ եւրոպացին նրա դուռը կբախէ, նա կա՛մ իր դուռը կփակէ նրա առջեւ կա՛մ եթէ ներս կընդունէ եւ մի կտոր հաց կը տայ, անպատճառ կաշխատէ իր անվերջ տրտունջներով, իր լացուկոծով ձանձրացնել իր հիւրին: Հայը իր դատը